ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մարտի 2018 թվականի N 27-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ «ԿԱՊԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.12 կետի «բ» և 1.19 կետի «ա» ենթակետերով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 190-Ն որոշման 4-րդ կետի՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան քաղաքում 2018 թվականի մայիսի 28-ին Հայաստանի Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին նվիրված միջոցառումների իրականացման նպատակով «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 4.100.000 (չորս միլիոն հարյուր հազար) դրամ՝ նրա հետ կնքելով հանձնարարության պայմանագիր:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Վ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2018 թ. մարտի 13
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2018թ. մարտի 13 -ի
N 27-Ա որոշման

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հայաստանի Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի
100-ամյակին նվիրված միջոցառումների իրականացման

Հ/Հ	Ծախսերի անվանումը	Հոդված	Գումարը /հազ.դրամ/
1	Գույքի և սարքավորումների վարձակալություն	4216.00	1,000,0
2	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239,11	700.0
3	Այլ մասնագիտական ծառայությունների ձեռք բերում:	4240.00	2,400,0
ԸՆԴԱՄԵՆԸ			**4.100.0**

ՀՀՍյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝ Ռ.Սարգսյան